



30 Մարտ 1959

Մեծ.

Տիար Սուրէն Մանուէլեան,  
Դիւանադպիր Առաջնորդարանիս Հայոց Ամերիկայի,  
որ ի ն.-Ե.,

Սիրելի Սուրէն,

Ահաւասիկ ներփակ հաճեցէք ունենալ Առաջնորդարան ուղարկուելիք ՏԱ-  
ՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ-ը 1958 տարւոյ: Կը սիրենք յուսալ որ ներողամիտ կը  
գտնուի Առաջնորդարանը սոյն Տեղեկագրին ուշացման համար, որու գլխաւոր  
պատճառը, ինչպէս ակնյայտնի է, մեր Միական Անդամական Ընդհանուր Ժողո-  
վին այս տարի շատ ուշ գումարուիլն էր, եւ հետեւաբար սոյն Տեղեկագրին  
պատրաստութիւնն ալ նոյնքան ժամանակ առաւ: Արդ զայն ներփակ կը գտնէք  
իր ամբողջացած ձեւին մէջ, եւ ստորագրուած նաեւ թէ՛ Միական Խորհուրդի  
եւ թէ՛ նաեւ Միական Անդամական Ընդհանուր Ժողովին դիւաններուն կողմէ,  
ըստ տրամադրութեան Տեղեկագրին:

Հաճեցէք ներփակ գտնալ նաեւ պաշտօնական փորձէն զատ, ուրիշ 7 կտոր  
թղթեր եւ պրակներ Պաշտօնական Տեղեկագրին պահանջքին ի գոհացում, ըստ  
հետեւեալին.-

1.- Անգլերէնով պատրաստուած պրակ մը, 19 էջերէ բաղկացեալ, ուր կարե-  
լի է գտնալ Միական Անդամական Ընդհանուր Ժողովի Օրակարգը, Եկեղեցւոյս  
Միական Խորհուրդին ելեւմտից մանրամասնեալ հաշուեցոյցը 1959-ի նախահա-  
շիւին հետ միասին, Եկեղեցաշինաց 3անձնահումբին ելեւմտից հաշուեցոյցը,  
Հովուական Տարեկան Ջեկոյց, Տարեկան Տեղեկագրներ Եկեղեցասիրաց Երէց  
եւ Կրտսեր կազմակերպութեանց, Դպրաց Դասուն, Միական Հայ Դպրոցի, է3 ՍԻ  
ՈՒԱՅ Օ է3-ի, եւ Միական Խորհուրդի:

- 2.- Տարեկան Տեղեկագիր Կիրակնօրեայ Վարժարանի:
- 3.- Ուսուցչաց եւ Պաշտօնէից ցանկ Կիրակնօրեայ Վարժարանի:
- 4.- Տարեկան Տեղեկագիր Միական Խորհուրդի, Հայերէն ձեռագիր:
- 5.- Միական Խորհուրդի 1958-ի կազմը:
- 6.- Միական Հայ Դպրոցի Խնամակալութեան կազմը:
- 7.- է3 ՍԻ ՈՒԱՅ Օ է3-ի 1958-ի վարչական կազմը:

Միակ բանը որ թերեւս կը բացակայի այս շարքին մէջ Հովուական Տարե-  
կան Հայերէնով պատրաստուած Ջեկոյցն է: Մէջը կայ Անգլերէնով պատրաստը-  
ւածը զոր նկատեցինք բաւարար, բայց եթէ անպայմանօրէն անհրաժեշտութիւն  
կը նկատուի Հայերէն լեզուով պատրաստուածը ունենալ, այդ պարագային պիտի  
խնդրէի որ փոքրիկ նոթով մը բարի ըլլայիք ինծի իմաց տալ, որպէս զի ես  
ալ զայն շուտով պատրաստելով եւ մեքենագրելով ղրկեմ Առաջնորդարան:

Ողջ լերուք ի Տեառնէ,  
Ողջունիւ Սիրոյ,  
Աղօթարար՝ *Sfr Spruany*  
Տ. Տիրան Բհնյ. Փափագեան,